ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Ղրղզստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և Ղրղզստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով երկու երկրների արդարադատության նախարարությունների միջև համագործակցության կարևորությունը,

հաշվի առնելով գիտական, տեխնիկական և մշակութային համագործակցության դրական փորձը, ինչպես նաև երկու պետությունների միջև տեղի ունեցող ինտեգրացման գործընթացները,

հայ և ղրղզ իրավաբանների միջև փոխըմբռնման և բարեկամական համագործակցության հետագա ամրապնդման նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կիրականացնեն համագործակցություն հետևյալ ուղղություններով.

1) իրավաբանական գիտության և պրակտիկայի տարաբնույթ հիմնահարցերով երկկողմ սիմպոզիումների, գիտաժողովների և սեմինարների կազմակերպում,

2) Կողմերի գերատեսչական նորմատիվ ակտերի մասին տեղեկության փոխանակում,

3) Կողմերի պատվիրակությունների փոխանակում արդարադատության մարմինների և հաստատությունների կազմակերպման և գործունեության ավելի ամբողջական ուսումնասիրման համար,

4) իրավաբանական կադրերի պատրաստման, մասնագետների փոխադարձաբար փոխանակման աջակցություն,

5) արդարադատության մարմինների և հիմնարկների միջև գործնական կապերի հաստատում,

6) օրինագծերի իրավական փորձաքննության համար համահավասար հիմունքներով մասնագետների խմբերի ստեղծում,

7) արդարադատության ազգային համակարգերի տեղեկատվության բնագավառի մասնագետների փոխանակման իրականացում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը կարող են հիմնել հանձնաժողովներ՝ սեփականության հարաբերությունների, ներդրումների ոլորտում և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ համաձայնեցված առարկայացանկով համատեղ ծրագրերի մշակման և օրենսդրության կատարելագործման հարցերով:

Հոդված 3

Կողմերը միջոցառումներ կիրականացնեն երկու պետությունների օրենսդրության ներդաշանակեցման և միասնականացման, ինչպես նաև ինտեգրացման ծրագրերի նախագծերի մշակման ուղղությամբ՝ հաշվի առնելով երկու երկրների տնտեսական զարգացման և նրանց միջև համագործակցության ընդայնման պայմանները:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի կատարման նպատակով Կողմերը յուրաքանչյուր տարի կհամաձայնեցնեն հաջորդ տարվա համագործակցության իրենց կոնկրետ նախագծերը՝ ելնելով համապատասխան ֆինանսական հնարավորություններից:

Համագործակցության համատեղ միջոցառումների ֆինանսավորման ժամանակ Կողմերը կելնեն այն սկզբունքից, որի համաձայն՝ կազմակերպման և գտնվելու հետ կապված, ինչպես նաև հնարավոր բժշկական ծախսերը կրում է ընդունող Կողմը, իսկ երկու ուղղություններով տրանսպորտով երթևեկության ծախսերը՝ ուղարկող Կողմը:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի գործողության ոլորտին վերաբերող հարցերով Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները կլուծվեն երկկողմ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի միմյանց ծանուցման պահից:

Սույն Համաձայնագիրը կարող է Կողմերից մեկի կողմից չեղյալ հայտարարվել և իր գործողությունը դադարեցնում է չեղյալ հայտարարման մասին ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից վեց ամիս լրանալուց հետո:

Կատարված է Երևան քաղաքում 1997 թվականի ապրիլի 21-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղրղզերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման հարցերում Կողմերը կօգտվեն ռուսերեն տեքստից:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի հունիսի 28-ից: